ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 03 դեկտեմբերի 2007 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին
դատական կազմը
Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի և Ռ.Պապայանի

Քննության առնելով Նինա Ղազարյանի և այլոց դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղաքացի Նինա Ղազարյանը և մյուսները դիմել են Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 159 հոդվածների (իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված բովանդակությամբ), «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ դատական օրենսգրքի 94 հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո ամբողջությամբ և 3-րդ մասի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6 կետի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Գործում առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադարական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ

Ն. Ղազարյանի և այլոց դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ և 159 հոդվածների (իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված բովանդակությամբ), «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ դատական օրենսգրքի 94 հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդատու» բառից հետո ամբողջությամբ և 3-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ